ԱՐՄԻՆԵ ԱՇԻԿՅԱՆ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱԶԱՏ ՇՈՒԿԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ազատ շուկայական հարաբերությունները եվրոպական և ամերիկյան մի շարք երկրներում ունեն հարյուրավոր տարիների պատմություն, իսկ մեզանում դրանք դեռևս ձևավորման փուլում են գտնվում: Այդ հարաբերությունները խոր կնիք են դնում ինչպես հասարակական ողջ գործընթացների խորքային կողմնորոշիչների վրա, այնպես էլ էապես փոխակերպության են ենթարկում ընտանիքները և երեխաների դաստիարակության համալիր հիմնախնդրի բոլոր բաղադրատարրերը:

Շոշափելով հասարակության սոցիալական համակարգի բոլոր ենթակառույցները, այդ թվում դպրոցն ու ընտանիքը, ազատ շուկայական հարաբերությունները բոլորովին նոր պահանջներ, նոր բովանդակային փոփոխություններ ու խնդիրներ են առաջադրում երեխաների դաստիարակությամբ մտահոգ բոլոր օղակներին:

Համակողմանի զարգացած, կրթված ու դաստիրակված, առողջ հոգեբանություն և ինքնուրույն գործելակերպ ունեցող սերունդ ունենալու հարցը ՀՀ –ում իրավական և ժողովրդավարական պետության կայացման անքակտելի բաղադրիչներից է, որն անհրաժեշտ նախադրյալ է հասարակության ձևավորման ճանապարհին: Երեխաների մեջ վերոհիշյալ որակների դաստիարակումը մեր երկրի հուսալի ապագայի լավագույն երաշխիքներից է : Այս տեսակետից երեխաների դաստիարակության խնդիրը, ներկա պահանջներին համապատասխան, դարձել է օրվա հրամայականը:

Պաշտպանելով և իրականացնելով երեխաների իրավունքներն ու շահերը՝ միաժամանակ ի հայտ են գալիս նրանց դաստիարակության ձևերի ու մեթոդների կատարելագործման նոր մոտեցումներ, որոնց էլ միտված է դեռևս 1989 թ.-ի ՄԱԿ-ի ընդունած «Երեխաների իրավունքների մասին» Համաձայնագիրը: Այն ստորագրել ու վավերացրել է նաև ՀՀ –ը:

ՀՀ –ը , հիմնվելով ՄԱԿ-ի «Երեխաների իրավունքների մասին» Համաձայնագրի և մեր հանրապետության Սահմանադրության վրա, 1996թ.-ի մայիսի 29-ին ընդունել է ՀՀ օրենքը «Երեխայի իրավունքների մասին»: Այն արտացոլում է սոցիալական հարաբերությունների ներկա փուլին բնորոշ դաստիարակության բովանդակային փոփոխություններ՝ նոր խնդիրներ առաջադրելով դպրոցին, ընտանիքին, հասարակական կազմակերպություններին և մյուս շահագրգիռ օղակներին:

Անվիճելի է, որ երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանությունը, նրանց դաստիարակության հարցերն առավելապես արդյունավետ կլինեն բոլոր օղակների համատեղ և համալիր աշխատանքի արդյունքում:

Ցավոք, ազատ շուկայի անցման ներկայիս փուլում, զանազան առարկայական և ենթակայական պատճառների հետևանքով խախտվել է ոչ միայն այդ օղակների համագործակցությունը, այլև նրանցից յուրաքանչյուրը հայտնվել է իրեն բնորոշ դժվարությունների ոլորտում, որից, անկասկած, տուժում է առաջին հերթին երեխայի դաստիարակության գործը: Ամեն մի հասարակարգի բարգավաճումն ու բարօրությունն անմիջականորեն կապված է այդ հասարակության հիմքի՝ ընտանիքի ամրության ու կայունության հետ:

Ընտանիքը հասարակության այն հիմնական կառույցն է, ուր ձևավորվում և զարգանում է երեխան: Հենց ընտանիքում պետք է ստեղծվեն այն բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ են երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջության ամրապնդման, ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար: Երեխայի դաստիարակության առաջին արարողն ընտանիքն է: Բնականոն, երջանիկ մանկության համար հարկավոր է ներդաշնակ ընտանիք, որը չի կարելի փոխարինել ոչ մի բանով: Ազգապահպանության ոգին և երեխայի դաստիարակության հիմքերը սերմանվում ու ձևավորվում են ընտանիքում: Ազգի բարգավաճման, միասնականության գրավականը կայուն ընտանիքն է, քանզի մենք՝ հայերս, մեր պատմությամբ ապացուցել ենք, որ ազգի վերածնունդն ու հարատևումը պայմանավորված են ընտանիքներով: Տեղին են հնչում Ն. Հարությունյանի խոսքերը. «Ընտանիքը յուրաքանչյուր ազգի

դիմագիծն է՝ իր կենցաղով, հոգեբանությամբ, ավանդույթներով, սովորույթներով ու ծեսերով, որով և տարբերվում է մյուս ազգերից: Միանգամայն իրավացի է այն միտքը, որ առողջ, բարգավաճող և հարատևող է այն ազգը, որը մարմնով, մտքով և հոգով առողջ ընտանիք ունի»:[1] Իսկ Յու. Վասիլկովան ընտանիքի մասին գրում է.«Ընտանիքը հասարակական եզակի կառույցներից է, որը պահանջում է մշտական ուշադրություն, եթե ցանկանում ենք ունենալ բնականոն զարգացած հասարակություն»:[2]

Ընտանիքների կենցաղային, ծիսական սովորույթների առանձնահատկություններն արտացոլվում են ազգային ինքնատիպ նկարագրի մեջ՝ ամբողջացնելով տվյալ ժողովրդի բնավորության համապարփակ գծերը: Մեր ժողովրդի ընտանիքներին, այս տեսակետից, առավելապես բնորոշ է երեխայի ուսման ու կրթության նկատմամբ մեծ ուշադրությունը, որը , ցավոք, սոցիալական բևեռացման պայմաններում ընդունել է հայ ընտանիքին անհարիր ձևեր:

Հենց այս հանգամանքը նկատի ունի Մ. Գալագուզովան, որը նշում է. «Չնայած ընտանեկան հարաբերությունների առանձնահատկություններին, գոյություն ունի մի ընդհանրություն, որը միավորում է բոլոր ընտանիքներին: Դա կյանքի ընտանեկան կերպն է, որում մարդկությունը գտավ գոյատևելու միակ հնարավորությունը՝ արտահայտելով իր սոցիալ- կենսաբանական էությունը»:[3]

Երեխայի դաստիարակությունն սկսվում է անմիջապես նրա լույս աշխարհ գալուց հետո: Հետևապես երեխայի ծնողների վարքագծից, նրանց փոխհարաբերություններից, ընտանեկան միջավայրից են էապես կախված երեխայի դաստիարակության բովանդակությունն ու դաստիարակության ձևերը:

Միանգամայն տեղի է այն միտքը, թե ընտանիքը կարող է դաստիարակել միայն այն դեպքում, երբ ինքը դաստիարակված է: Երեխաներին

---

[1]Ն.Հարությունյան,«Խաթարված ընտանիքները և նրանց հետևանքները», «Երևանի համալսարան » ամսագիր,1992,թիվ3,էջ35:

[2]Ю. В. Василькова, Т. А. Василькова ,,Социальная педагогика,, Москва, 1999г., ст. 272.

[3] ,,Социальная педагогика'' под редакцией М. А. Галагузовой, М. 2000г., ст. 167

ճիշտ դաստիարակելն ընտանիքի համար սոսկ պարտականություն չէ, այլ հասարակության պահանջ, քանի որ կանոնավոր դաստիարակություն չստացած մարդը փորձանք է ոչ միայն ընտանիքի, այլև հասարակության համար:

Գիտնականներն առանձնացնում են ընտանիքի մի քանի գործառույթներ[1]: Մենք կանդրադառնանք նրանցից մի քանիսին, որոնք առավելապես վերաբերվում են երեխայի դաստիարկությանն ու զարգացմանը:

<u>Վերարտադրողական գործառույթ</u>, որը պայմանավորված է մարդկային ցեղի շարունակականության անհրաժեշտությամբ: Այս գործառույթը ներկայումս ուղեկցվում է մի շարք բարդություններով: Զգալիորեն նվազել է ամուսնությունների թիվը: Ավելին, վերջին տարիներին նվազել է նաև երեխաների թիվը՝ նախկին 3-4-ից հասնելով 1- 2 –ի: Ցավոք այս երևույթը մեծ տարածում է գտել հատկապես նորաստեղծ ընտանիքներում: Այն պայմանավորված է օրեցօր աճող նյութական, սոցիալ-տնտեսական դժվարություններով, բարոյահոգեբանական առանձնահատկություններով :

<u>Տնտեսական գործառույթ</u>, որը պայմանավորված է ընտանիքի չափահաս անդամների կողմից նյութական որոշակի միջոցների ստեղծմամբ և տնտեսության վարմամբ:Երկրում տիրող սոցիալ – տնտեսական ու բարդ հակասական ճգնաժամային իրողությունները բացասական խոր հետքեր թողեցին նաև այս գործառույթի ոլորտում:

<u>Սոցիալական գործառույթ</u> - Ընտանիքն է այն հիմնական և առաջնային սոցիալական խումբը, որն ակտիվորեն մասնակցում է երեխայի անձի ձևավորման և դաստիարակության գործում: Ընտանիքն է երեխային ուղեկցում հասարակության մեջ: Սոցիալական այս առաջնային միջավայրում պետք է ստեղծվեն այն սոցիալական պայմանները, որոնք նպաստելու են երեխայի անձի ձևավորման և լիարժեք դաստիարակության համար:

---

[1] Նույն տեղում՝ էջ 273:

Դաստիարակչական գործառույթ - Երեխայի դաստիարակության գործում մեծ է ծնողների դերն ու նշանակությունը: Ծնողներն եղել և մնում են երեխայի առաջին դաստիարակները: Ծնողների ազդեցությունը և նրանց անձնական օրինակը երեխայի ամբողջ կյանքում մնում են ամենակարևորը:

Այս առումով կարևորվում է ծնող- երեխա փոխհարաբերությունը: Եթե ընտանիքում առկա են փոխադարձ սերն ու հարգանքը, փոխըմբռնումն ու վստահությունը, ապա առանց վարանելու կարող ենք ասել, որ դաստիարակչական աշխատանքները կունենան դրական արդյունք: Նման ընտանիքում կձևավորվի առողջ, հասարակությանը պիտանի երեխա: Իսկ եթե ծնողների և զավակների միջև ստեղծվել են անառողջ հարաբերություններ, ապա այդ իրավիճակը հղի է անկանխատեսելի հետևանքներով: Այս առումով տեղին է նշել Բ. Սպոկի խոսքերը,որ «երեխայի ճիշտ դաստիարակությունը կախված է ոչ թե ծնողի խստության կամ մեղմության աստիճանից, այլ երեխայի նկատմամբ նրա ունեցած զգացմունքներից: Երեխայի զգացմունքային զարգացման հարցում ծնողի գուրգուրանքն ու փայփայանքը ունեն նույնպիսի նշանակություն, ինչպես մայրական կաթը՝ երեխայի ֆիզիկական զարգացման գործում»:[1]

Կատարյալ է, երբ ընտանիքն ու դպրոցը միասնական են հանդես գալիս երեխայի դաստիարակության գործում: Սակայն միշտ չէ, որ հնարավոր է լինում իրականացնել այսպիսի ներդաշնակություն: Փորձենք վերոհիշյալ գործառույթները քննարկել ներկայիս մեր հայ ընտանիքների առնչությամբ:

Իրավացի է Ն. Հարությունյանի այն միտքը, թե « հայ ազգը , որ տեսել է թալան ու ավեր, ջարդ ու եղեռն, նորից վերագտել է իրեն՝ շնորհիվ իր լեզվի, հավատի ու ընտանիքի ամրության:Իսկ այսօր մեր ազգի առջև ծառացել է նրան խիստ անհարիր, շատ լուրջ ու ծանր մի պրոբլեմ՝ ընտանիքների խաթարում, որը մեծ տագնապի ու անհանգստության տեղիք է տալիս՝ նկատի ունենալով այն հանգամանքը, թե ինչ անգնահատելի դեր է խաղում ընտանիքն

---

[1] Ю. В. Василькова, Т. А. Василькова. ,, Социальная педагогика'', М. 1999г., ст. 305.

անձնավորության ձևավորման, նրա համակողմանի ու ներդաշնակ զարգացման և դաստիարակության գործում»:[1]

Վերջին շրջանում հայ ընտանիքները կրել են կառուցվածքային և որակական մի շարք փոփոխություններ. փոխվել են հայացքները ամուսնության,ընտանեկան հարաբերությունների, ընտանիքում կնոջ և տղամարդու դերի, երեխայի դաստիարակության հարցերի նկատմամբ: Նկատելի են ամուսնությունների թվի կրճատում, աճել են արտամուսնական կապերի, ամուսնալուծությունների թվաքանակը: Ներքին քաղաքական որոշ «բարեփոխումներ» հանգեցրին հասարակության արագ և խիստ բևեռացման՝ իր բոլոր տխուր հետևանքներով:

Անցումը շուկայական հարաբերությունների հանգեցրեց ընտանիքների սոցիալ-տնտեսական գործառույթների խախտման, ընտանիքների զանգվածային աղքատացման:

Հասարակության զարգացման անբարենպաստ պայմանները, տնտեսական ճգնաժամը, սոցիալական այնպիսի երևույթները, ինչպիսիք են՝ աղքատությունն ու գործազրկությունը, իրավական և բարոյական անպաշտպանվածությունը խարխլեցին ընտանիքների հիմքերը: Վերոհիշյալ գործոնները նպաստեցին նաև միջամուսնական հարաբերություններում կոնֆլիկտների խորացմանը: Անհամաձայնություններ ու տարաձայնություններ առաջացան ծնող- երեխա, երեխա- ուսուցիչ, ընտանիք- դպրոց- պետություն փոխհարաբերություններում:

Դաստիարակության գործառույթի խախտման,բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտի առկայության, մեծերի անշրջահայացության պատճառով, ինչպես նաև կտրվելով կրթադաստիարակչական գործընթացից, դուրս մնալով ծնողների և մանկավարժների ուշադրությունից՝ բազմաթիվ երեխաներ հայտնվեցին փողոցում՝ լրացնելով մուրացիկների և թափառաշրջիկների ստվար բանակը: Այսօր նմանատիպ երեխաներ կարելի է տեսնել երևանյան գրեթե բոլոր փողոցներում: Սրանք ոչ միայն անտուն, ծնողազուրկ երեխաներ

---

[1] Ն.Հարությունյան,«Խաթարված ընտանիքները և նրանց հետևանքները», «Երևանի համալսարան» ամսագիր,1992,թիվ 3,էջ 35:

են, այլև, շատ անգամ, տուն ու ծնողներ ունեցողներ: Որո՞նք են այն պատճառները, որոնք մղում են երեխաներին նման քայլերի.

1. երկրի սոցիալ- տնտեսական ծանր պայմանները,
2. ընտանիքներում բարոյա- հոգեբանական անառողջ մթնոլորտը / փախուստ տնից, դառը իրականությունից/,
3. ոչ լիարժեքության զգացումը,
4. փող վաստակելու միջոց գտնելը,
5. նախանձը ուրիշների ապահով , անհոգ կյանքի նկատմամբ,
6. ոչ լիարժեք դաստիարակությունը,
7. ընտանիքների և կրթօջախների ոչ բավարար հսկողությունը,
8. զանազան ճանապարհներով հայ ընտանիքների խորթ գաղափարների ներթափանցումը, կրոնական աղանդների, ֆիլմերի /սարսափ/ միջոցով երեխայի հոգեբանության խաթարումը,
9. երկրաշարժը,
10. Արցախյան պատերազմը:

Ահա այն ծանրակշիռ դրդապատճառները, որոնք ուշադրությունից դուրս մնացած և խեղաթյուրված դաստիարակություն ստացած երեխաներին մղում են նման քայլերի:

Երկրի և ընտանիքի սոցիալ- տնտեսական պայմանների վատթարացումը, ծնողների և մանկավարժների, պետության և հասարակության հսկողության թուլացումը հանգեցրին նաև անչափահասների շրջանում հանցագործությունների աճին: Դրա վկայությունը մանկական վերադաստիարակչական հաստատություններում իրավախախտ անչափահասների թվի ավելացումն է, որոնք մեղադրվում են տարբեր հանցանքներում՝ գողություն, ավազակային հարձակում, մանր խուլիգանություն և այլն:

Այսօր մանկական հանցագործությունների դեմ պետք է պայքարել միասնաբար՝ վերացնելով դրանք ծնող սոցիալ- տնտեսական պատճառները, էլ ավելի ուժեղացնելով դաստիարակչական աշխատանքն ընտանիքներում, կրթօջախներում և հասարակական վայրերում՝ հաշվի առնելով երեխաների տարիքային, անհատական և հոգեբանական առանձնահատկությունները: Կատարած հանցանքի համար դեռահաս օրինախախտներին հատուկ

դաստիարակչական հաստատություններում պահելու նպատակը պետք է լինի նրանց վերադաստիարակելը, կյանքին և աշխատանքային նորմալ պայմաններին վերադարձնելը: Այդ իսկ նպատակով օրինապահ մարմիններից պահանջվում է յուրահատուկ վերաբերմունք անչափահաս օրինախախտների նկատմամբ՝ ցուցաբերելով չափազանց խորաթափանցություն, նրբազգացողություն, մեծ համբերատարություն՝ ճիշտ վճիռ կայացնելու համար՝ խորհրդակցելով մանկավարժի և հոգեբանի հետ:

Շատ ընտանիքների սոցիալ-տնտեսական ծանր պայմաններն անհրաժեշտ հնարավորություններ չեն ստեղծում այնտեղ մեծացող երեխաների նորմալ խնամքի և նրանց առողջության պահպանման / սնունդ, դեղորայք, հիգիենա/ համար, որի հետևանքով աճել է մանկական հիվանդությունների և մահացությունների թիվը: Թերսնումից, գերծանրաբեռնվածությունից, հիգիենիկ պայմանների բացակայությունից անչափահասների շրջանում մեծ տարածում են գտել այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են՝ տուբերկուլյոզը, աղիքային ինֆեկցիոն հիվանդությունները /խոլերա, դիզենտերիա, մալարիա/, սրտանոթային համակարգի խանգարումները, իմունային համակարգի հետ կապված հիվանդությունները և այլն:

Այսօր պետական հոգածության առարկա է թափառաշրջիկ, մուրացիկ, հիվանդ, հաշմանդամ, հանցագործ անչափահասների հարցը: Այստեղ պետք է միասնական գործեն թե՝ ընտանիքները, թե՝ դպրոցը և թե՝ ՆԳՆ անչափահասների բաժինները:

Միայն ընտանիք- դպրոց- պետություն սերտ համագործակցության շնորհիվ է հնարավոր իրականացնել երեխաների դաստիարակչական հիմնախնդիրների լուծումը:

Ներկայումս մեր երկրում գործում են մի շարք հասարակական կազմակերպություններ, բարեգործական միություններ, որոնց աշխատանքի նպատակն է օգնել ընտանիքներին երեխաների դաստիարակության հարցում:

Այս առումով արժե նշել ՀՕՖ-ի «Երեխաների ընդունման և կողմնորոշման բաշխիչ կենտրոնում», «Օրրան» բարեգործական միությունում,

«Զատիկ» մանկատանը, ՆԳՆ անչափահասների բաժիններում կատարվող հսկայածավալ աշխատանքների մասին:

Ինչպիսի իրավիճակներում էլ լինեն երեխաները, պետք է հասկանալ և ներողամտորեն վերաբերվել նրանց՝ հաշվի առնելով տարիքային և անհատական առանձնահատկությունները: Միշտ նկատի ունենալ, որ երեխաների մոտ սխալվելու հավանականությունն ավելի մեծ է: Միայն ընտանիք- դպրոց –պետություն միասնական ջանքների շնորհիվ է հնարավոր կանխել երեխաների վարքագծային շեղումները և նպաստել նրանց լիարժեք զարգացմանն ու դաստիարակությանը: Իսկ դրա համար շատ կարևոր է ընտանիքների սոցիալ- տնտեսական գործառույթների, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի վերականգնումը, ծնողների զբաղվածության ապահովումը /աշխատատեղերի ստեղծում/ , ծնող- երեխա, երեխա- մանկավարժ փոխհարաբերությունների կարգավորումն ու առողջացումը, ընտանիք - դպրոց- հասարակություն համագործակցությունը, կրթօջախների կրթադաստիարակչական գործունեության արդյունավետության և ընտանիքների նկատմամբ պետության հոգածության բարձրացումը:

Հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է իրեն պատասխանատու զգա երեխաների դաստիարակության հարցում, լինի զգույշ ու նրբանկատ, որովհետև մեր կողքին նոր ձևավորվող սերունդ է մեծանում, որի լիարժեք ու կատարյալ լինելուց է կախված մեր ողջ ազգի ապագան: